ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Երևանի պետական համալսարան
arshaknersisyan@mail.ru

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՐՇԱԿՈՒՆԻՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. Պապ Արշակունի, Վարազդատ Արշակունի, հայոց պետականություն, Մեծ Հայքի թագավորություն, Հռոմեական կայսրություն, Պարսկաստան, Մուշեղ Մամիկոնյան, Բատ Սահառունի, Վաղես, Շապուհ, սպանություն, քաղաքականություն, ձախողում:

Ключевые слова и выражения: Пап Аршакуни, Вараздат Аршакуни, Армянская государственность, Королевство Великой Армении, Римская империя, Персия, Мушег Мамиконян, Бат Сахаруни, Вагес, Шапух, убийство , политика, провал.

Key words and expressions: Pap Arshakuni, Varazdat Arshakuni, Armenian Statehood, the kingdom of Great Armenia, the Roman Empire, Persia, Mushegh Mamikonian , Bat Saharuni Vaghes, Shapuh, assassination , politics, failure.

Պապ Արշակունու 474թ. չարանենգ սպանությունից հետո, որը պետք է վերագրել Հռոմի դավադիր քաղաքականությանը և այդ քաղաքականության հայաստանյան կցորդներին՝ հանձինս հայ դավադիր ուժերի և մասնավորապես Մուշեղ Մամիկոնյանի, որը փաստորեն հակադրվում էր Մեծ Հայքի թագավորության ինքնուրույնության և անկախության ամրապնդման արդյունավետ ջանքերին և ժամանակակիցների վկայությամբ հռոմեասեր էր, Վաղես կայսրը հայոց թագավոր է նշանակում Վարազդատին: Վերջինս նշանակվեց այն պահին, երբ Հայաստանում իշխող դիրք էր զբաղեցնում Մուշեղը, որը նրա ապագան պատկերացնում էր Հռոմի այնտեղ զինվորական, որն ինքնին նշանակում է քաղաքական, ներկայությամբ: Նրա այս ըմբռնումն էր տարել Պապի ֆիզիկական ոչնչացմանը Հռոմի կողմից միտված քայլերին

աջակցությանը: Այս հարցին խորությամբ անդրադառնալն մեկ այլ ուսումնասիրության թեմա է: Ավելացնենք միայն, որ Պապի սպանությանը Մուշեղի մեղսակցությունն արդեն ապացուցված է վաղուց[1] և Վարազդատ Արշակունուն նվիրված մեր այս ուսումնասիրությունը նույնպես կնպաստի այդ համոզմունքի առավել խորը հիմնավորմանը, ինչը միայն ցավով ենք մատնանշում:

Վարազդատին, որն իշխել է 474-478թթ., Մովսես Խորենացին և Փավստոսը համարում են Արշակունի[2]: Ավելին, Մանվել Մամիկոնյանի կողմից գերեվարվելուց հետո, վերջինիս այն արտահայտությանը, որ դու Արշակունի չես, Վարազդատը պատասխանում է. «Ես իսկական Արշակունի եմ, որ իմ Արշակունիների նախնիների թագը դրի և իմ նախորդների աշխարհին տիրեցի, և իմ հորեղբոր՝ Պապի վրեժն առա քո չարագործ եղբորից Մուշեղից»[3]:

Դժվար է ենթադրել, թե ով էր նրա հայրը, բայց մի բան ակնհայտ է, որ Վարզդատը Պապի մերձավոր ազգականն էր: Լեոն ենթադրում է, որ նա Արշակի առաջին կնոջից էր ծնված, նախքան Փառանձեմի հետ ամուսնանալը[4]:

Վարզդատի մասին թե՛ հայ պատմագրության և թե՛ հայ ժողովրդի մեջ այն տպավորությունն է արմատավորվել, որ նա եղել է մանկամիտ մի անձնավորություն, թույլ պետական գործիչ, որը պետք է պայմանավորել հիմնականում Փավստոսի տեղեկություններով և այն նախասիրությամբ, որ այս պատմիչը ունեցել է Մամիկոնյանների հանդեպ, որոնց նշանավոր զորավարին սպանել է վերջինս: Սակայն իրականում Վարազդատն եղել է այն վերջին պետական այրը, որը ջանքեր է գործադրել իր պետությունը արտաքին և ներքին դավերից փրկելու ուղղությամբ, որոնց դիմակայել են նաև հռոմեասեր Մամիկոնյանները՝ հանձինս Մուշեղի և Մանվելի: Դիմենք փաստերի: Այսպես, «Հայ ժողովրդի պատմություն» բուհական դասագրքում հետևյալն ենք կարդում. «Վարազդատը իր կարճատև գահակալության շրջանում ոչ միայն չի փորձում միավորել պառակտված ուժերը, այլև իր թեթևամիտ վարքով ու քսու խորհրդականներով՝ ավելի է խորացնում

[1] Տե՛ս Հրանտ Արմեն, Պապ Արշակունի, Երուսաղեմ, 1958:

[2] Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևանի համլսարանի հրատարակություն, Երևան, 1981,էջ 278, Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանի Երևան, 1968, էջ 273:

[3] Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, էջ 279:

[4] Լեո, Երկերի ժողովածու, առաջին հատոր, Երևան, 1966, էջ 487:

նախարարների պառակտումը»[5]: Գրքի հեղինակներն այնուհետև այն տպավորությունն են ստեղծում, որ որոշ նախարարներ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ ամեն կերպ ցանկանում են կասեցնել հայոց պետականության անկումը, բայց դա փաստորեն ձախողվում է Վարազդատի մեղքով[6]: Լեոն Փավստոսի տեղեկությունների հիմամբ գրում է, որ ստեղծված իրավիճակում «Մուշեղ սպարապետը մեծամեծ ջանքեր էր գործ դնում սահմաններն ամրացնելու՝ խաղաղությունը երկրի ներսում ապահովելու համար»[7]: Իսկ այդ տեղեկություններով նա ցանկանում էր հայոց գավառներում բերդեր կառուցել՝ այնտեղ զետեղելով բերդապահ զորքեր, որոնք պետք է պահվեին հռոմեական միջոցներով: «Սա արդեն չափազանցություն էր, - գրում է Լեոն, - որ նկատել տվին մի քանի հայ նախարարներ և դրանց մեջ մասնավորապես Բատ Սահառունին, որոնք շատ իրավացի կերպով առարկում էին թե այդպիսի մի զինվորական կազմակերպությունը կլիներ իրապես ջնջել հայոց թագավորի իշխանությունը, դարձնել նրան կայսրի ձեռքին կատարյալ խաղալիք: Վարզդատը, ինչպես երևում է, հենց այդ պատճառով էլ դիմադրեց Մուշեղի ծրագրին և հենց այդ հողի վրա էլ սաստկացավ թագավորի թշնամի վերաբերմունքը դեպի Մամիկոնյանները[8]»:

Փաստորեն, Լեոն ինքն իրեն հակասում է, մի կողմից գրելով, որ Մուշեղը մեծամեծ ջանքեր էր գործադրում երկիրը խաղաղեցնելու համար, իսկ մյուս կողմից էլ այն կարծիքն է հայտնում, որ նրա ծրագիրը տանում էր պետականության անկմանը: Առհասարակ Լեոյի և հիմնահարցին անդրադարձած այլ պատմաբանների կողմից Վարազդատի կառավարման շրջանին անդրադարձը ընթանում է կարծես այն տպավորությունը առաջ չբերելու անմնացորդ ցանկությամբ, որ Մուշեղը չէր դավում հայոց պետականությանը և մատնանշում էր փրկության ուղի: Բայց միթե՞ կար ավելի հստակ փրկության ուղի, քան անկախ պետականության գաղափարի շուրջ համախմբվելը, երկու հարևան գերտերությունների միջև խուսանավելու քաղաքականություն ընտրելը, որը հաջողվեց Պապին, քան Հռոմի կցորդ դառնալը: Ուրեմն, ոչ մի հիմք չկա ժխտելու, որ Վարզդատը ցանկանալով վերացնել Մուշեղին՝ հետապնդում էր պետականությունն անկախ պահելու ամենակարևոր միտումը: Մամիկոնասեր Փավստոսը, որը

[5] Հայ ժողովրդի պատմություն, սկզբից մինչև 18 – րդ դարի վերջը, խմբ. պրոֆ. Ստ. Մելիք Բախշյանի, Երևան, 1975, էջ 257:
[6] Նույն տեղում, էջ 259 – 260:
[7] Լեո, նշվ. աշխ., էջ 489:
[8] Նույն տեղում, էջ 48+9 – 490:

ցանկանում է վարկաբեկել Վարազդատին, որն անում էր նաև Պապի պարագայում, չի կարողանում սքողել այն պարզ ճշմարտությունը, որ Մամիկոնյանները հակադրվում էին հայոց արքային ոչ ի շահ հայոց պետականության: Ահա այդ մասին նրա պարզ վկայությունը, որն անում է Մուշեղի հռոմեական միջոցներով Հայաստանը պահելու ծրագրերին անդրադառնալուց անմիջապես հետո. «Եվ հունաց թագավորը մեծ ուրախությամբ հանձն առավ այս բաները կատարել (Հայաստանում մինչև Գանձակ, որը նրա և Պարսկաստանի սահմանն էր, կառուցել բերդաքաղաքներ, ամուր պարիսպներով, որպես զորանիստ վայրեր, հայոց բոլոր ազնվականներին զինել կայսերական ծախսերով, նույն ծախսերով պահել հայոց զորքը – Ա. Ն.), որպեսզի այս բոլոր միջոցներով երկիրը հաստատ ու անշարժ կապվի իր հետ, և պարսից թագավորը չկարողանա հայոց աշխարհը գրավել»[9]:

Ի՞նչ էր սա, եթե ոչ պետական դավաճանության ծրագիր, Հռոմի Հայաստանին տիրելու ծրագիր, որին չէր կարող չընդդիմանալ Պարսկաստանը՝ Հռոմի հետ ծրագրելով Հայսատանի բաժանումը, որին, ինչպես նշեցինք, դեմ եղավ Հռոմը, իսկ հետո համաձայնվեց՝ ստիպված: Փավստոսն այս տողերով լրիվ ջրում է իր ասվածը Վարազդատի մասին, երբ նրան համարում է մանկամիտ և հաստատում է Մուշեղի պետականությանը քանդելու միտված քայլերի առկայությունը, որից չէր կարողանա չզգուշանալ Վարազդատը և որի իրականացմանը չկարողացավ խոչընդոտել Պապ թագավորը: Մուշեղին շարքից հանելու խնդիրը հրատապ էր դառնում: Դա ճիշտ է ըմբռնել Հ. Մանանդյանը, որը Փավստոսից Մուշեղի ծրագրերի մասին անհրաժեշտ մեջբերումն անելուց հետո հետևյալն է գրում. «Հատվածի (Փավստոսից հղած – Ա. Ն) բովանդակությունից միանգամայն պարզ երևում է, որ Հայաստանի անկախության և Արշակունյաց թագավորության վերականգնման ու զորեղացման տեսակետից Մուշեղ Մամիկոնյանի և հռոմեական կուսակցության քաղաքական կողմնորոշումը նույնքան անբարենպաստ ու վտանգավոր է եղել, ինչպես Մերուժանի և Պարսկական կուսակցության կողմնորոշումը: Այս երկու կուսակցություններն էլ, զոհաբերելով Հայաստանի պետական ինքնությունը, տրամադիր են եղել հանձնել երկիրը հարևան հզոր պետություններին:

Իհարկե, իրենք՝ Արշակունիները, Պապը և Վարազդատը, որոնք ունեին մտերիմ կողմնակիցներ ու խորհրդատուներ, չէին կարող հանդուրժել իրենց թագավորական իշխանության նվազումը և ձգտելու էին

[9] Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, էջ 273 – 274:

վերականգնել Արշակունյաց թագավորության հին վարկը և փայլը: Հայոց թագավորության պահպանման ու ուժեղացման այս քաղաքականությունը, անշուշտ, ավելի էր համապատասխանում հայ երկրի իրական շահերին, քան քաղաքական վերոհիշյալ ընթացքը Մուշեղ Մամիկոնյանի»[10]:

Անհնար է չհամաձայնվել Հ. Մանանդյանի հետ, որը շատ ճիշտ է ըմբռնել կացությունը, որը լի էր վտանգով հայոց պետականության անկման տեսանկյունից: Դրա ըմբռնողունակությունը վիպական կարգավիճակ է հաղորդում Փավստոսի պատմածներին՝ Վարազդատ թագավորի և Բատ Սահառունու վերաբերյալ հյուսած, մի բան, որն արել է նաև Պապի պարագայում: Եզրկացությունը մեկն է՝ Վարազդատը նշանակված լինելով Հռոմի կողմից այն հույսով, որ կլինի նրա վասալը, այդ վասալ լինելուն ձգտող Մուշեղ Մամիկոնյանին հակադրվելով՝ փաստորեն հակադրվում էր Հռոմին՝ ցուցաբերելով պետականության ամրապնդմանը միտված քաղաքական գործիչի հատկանիշներ, որի համար երկրորդական էր իշխանությունն առանց պետականության: Հակառակ դեպքում ինքը կարող էր լինել հռոմեամետ այն քաղաքականության կրողը, որը հանդիսացավ Մուշեղն՝ ի վնաս այդ պետականության: Մենք այն կարծիքին ենք, որ Մուշեղի՝ Պապի սպանությանը մասնակից լինելու Վարազդատի և նրա մերձավորների միջև եղած կասկածը ավելի է նրանց մոտ հիմնավորվում, երբ ականատեսն են լինում նրա՝ նույն քաղաքականության շարունակման: Եվ դրվում է խնդիր՝ մեջտեղից վերացնելու Մուշեղին: Բատ Սահառունու կողմից Վարազդատին հրահրելու արդյունքում Մուշեղին սպանված համարելու Փավստոսի մատուցած տեսակետը քննության չի դիմանում: Համաձայն այդ տեսակետի՝ Բատը ցանկացել է զավթել սպարապետի պաշտոնը համոզիչ չի հնչում, որովհետև այն ինչ նա ասում է Վարազդատին՝ լրիվ համապատասխանում էր իրականությանը: Իսկ նա հետևյալն է ասում. «Հնուց հետե, նախնյաց ժամանակներից ի վեր, Մամիկոնյանններն են կորստի մատնել ձեր Արշակունյաց տոհմը, որովհետև ի բնե ձեր հակառակորդներն են եղել. դրանք են միշտ կերել հայոց աշխարհը, մանվանդ Մուշեղը, որը չար ու նենգավոր մարդ է: Որովհետև նա սիրել է ձեր թշնամիներին և ատել է ձեր սիրելիներին ու միշտ ձեզ հետ վարվել է նենգությամբ, երկդիմությամբ ու չարամտությամբ: Մի՞թե դա այն Մուշեղը չէ, որ Պապի թագավորության ժամանակ պարսիկների հետ պատերազմելիս մի քանի անգամ հնարավորություն ունեցավ պարսից Շապուհ թագավորին սպանելու, բայց չսպանեց, այլ

[10] Հակոբ Մանանդյան, Երկեր, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Բ հատոր, Ա մաս, երևան, 1978, էջ 234 – 235:

թշնամուն ազատ արձակեց. մի անգամ էլ ձեռք գցեց Շապուհ թագավորի կանանց և խնամքով ու հոգատարությամբ ժանվարներով ուղարկեց Շապուհի ետևից: Դա այն Մուշեղը չէ՞, որ Աղվանից Ուռնայր թագավորին ձեռք գցեց, բայց սպանել չկամեցավ, այլ թշնամուն ազատ արձակեց: Դա այն Մուշեղը չէ՞, որի հրամանով և որի խորհրդով հունաց զորավարները Պապ թագավորին սպանեցին, որովհետև դա էր, որ Հունաց թագավորին թշնամացրեց ու գրգռեց Պապ թագավորի դեմ, մինչև որ սպանել տվեց: Արդ՝ պետք է որ նա քո ձեռքից մեռնի, նա չպետք է ապրի: Եվ եթե դու չշտապես, արքա, նա մտածել է այժմ Հայոց աշխարհը լցնել քաղաքներով, զորանիստներ դարձնել՝ հունաց զորքերն այնտեղ բնակեցնելու համար: Եվ այնուհետև կա՛մ Հունաց թագավորը քեզանից կխլի հայոց թագավորությունը, կա՛մ հենց այս Մուշեղը (քեզ) կսպանի և ինքը կթագավորի»[11]:

Փավստոսը, մեր կարծիքով, այնքան էլ պարզունակ պատմիչ չէ, որքան թվում է: Երբեմն նա այն ոճով է հանդես գալիս, որ կարծես քննադատության քողի տակ ցանկանում է վեր հանել կամ ընկալելի դարձնել այն ամենը, որոնք իրական ու ճշմարիտ են: Հակառակ դեպքում հարց է առաջանում՝ ինչ սխալներ կան Բատին վերագրված այս խոսքերում: Թերևս մի փոքր չափազանցություն կա այն պահով, որ Մամիկոնյանները ի սկզբանե Արշակունիների հակառակորդներն են եղել: Բայց մնացած ամբողջը լիովին համապատասխանում է իրականությանը: Հնարավոր է նաև, որ գովաբանելով Մամիկոնյաներին, նա հաճախ չի կարողացել սքողել պատմական ճշմարտությունը՝ նրանց երբեմն անկախ պետականության պահպանման գաղափարին հակադրվելու առումով: Անկախ ամեն ինչից, նա չէր կարող այդքան միամիտ լինել՝ չհասկանալու համար պետականությանն սպառնացող վտանգը:

Թե ինչ եղավ այնուհետև, հանրահայտ է: Պարզապես ցանկանում ենք շեշտել, որ Մուշեղի՝ Պապի նման խնջույքի սեղանի մոտ սպանվելու փաստը վկայում է այն մասին, որ դրանով Վարազդատը ցանկացել է լուծել երկու խնդիր՝ ա. առնել Պապի սպանության վրեժը, մի բան, որ չարեցին Մուշեղն ու մյուսները այդ մեծ արքայի սպանությունից հետո, բ. դրանով հասկացնել տվեց, որ Մուշեղն այդ սպանության մեղսակիցն է, որի համար էլ հատուցում է:

Իսկ ի՞նչ կարևոր խնդիր է լուծում այս քայլով Վարազդատը՝ կապված հռոմեական կայսրության հետ: Նա փաստորեն Մուշեղին մեջտեղից վերացնելով, ինքն էր դառնում Հռոմի հետ քաղաքականության

[11] Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, էջ 274 – 275:

գլխավոր դեմքը, խուսանավելու հնարավորություն էր տալիս վերջինիս և Պարսկաստանի միջև: Նա չեզոքացնում է Մուշեղի ծրագիրը և ավելին՝ Պապի նման փորձ է անում դրացիական հարաբերություններ ստեղծել Շապուհի հետ: Մ. Խորենացին, որը աղոտ է ներկայացնում Պապի և Վարազդատի կառավարման շրջանը և ոչ ճշգրիտ պատմական իրողությունները՝ նրանց հետ կապված, դրա փոխարեն Վարազդատին ներկայացնելով որպես քաջ և հաղթահասակ անձնավորություն, հետևյալ ուշագրավ տեղեկությունն է հաղորդում այդ մասին. «Այսպես իր երիտասարդության քաջություններից հարբած լինելով՝ թագավորության ժամանակ էլ չէր հնազանդվում Հունաց վերակացու զորքերի խրատին: Այլ պատգամավորներ է ուղարկում Շապուհի մոտ, որ իր աղջիկներից մեկին իրեն կնության տա և ինքը հայոց աշխարհը նրան կդարձնե»[12]:

Այս տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ Վարազդատն արդեն Պապի նման սկսում էր որդեգրել Հռոմի և Պարսկաստանի միջև խուսանավելու քաղաքականություն, որը սակայն ձախողվեց ոչ իրենից կախված պատճառներով: Դրանցից առաջինն այն էր, որ վատթարացավ Վաղես կայսեր վիճակը՝ վեստգոթերի հարձակման պատճառով, որոնք հասել էին Թրակիա և Կոստանդնուպոլիս[13]: Այս տեսակետն արտաքուստ կարող է տարօրինակ հնչել, այն պատճառաբանությամբ, որ Վաղեսի թուլացումը ձեռնտու էր Հայաստանին: Անշուշտ ձեռնտու էր, բայց դրանով արձակվում էին Շապուհի ձեռքերը. նա այլևս կցանկանար տիրել Հայաստանին, քանի որ Հռոմը չէր կարող խոչընդոտել: Այսինքն՝ վերջ խուսանավելու քաղաքականությանը, որին պետք է փոխարիներ Պարսկաստանի հետ նոր ռազմավարությունը, որը երկու բան պետք է նշանակեր՝ գերիշխանության ընդունում կամ ռազմական ընդհարում: Տեղի ունեցավ երկրորդը և հետևյալ հանգամանքներում: Շապուհ Բ – ն իմանալով, որ Վաղես կայսրը վերոհիշյալ իրադարձություններից հետո պատրաստվում է արշավել Պարսկաստան, հանձնարարում է Սուրեն անունով դեսպանին՝ հետ վերցնել Հռոմից այն փոքր գավառները, որոնք 376թ. բանակցությունների ժամանակ տրվել էին նրան: Դրանք Հաշտյանքն ու Բալահովիտն էին, որոնք տրվել էին Հռոմին, պայմանով, որ նրանք նա հրաժարվեր Հայաստանից[14]: Այդ գավառներն առանց կռվի հետ են վերցվում, որովհետև Վաղեսը բարբարոսական ցեղերի հարձակման հետևանքով իր զորքերը հանում է Հայաստանից և ուղարկում Թրակիա:

---

[12] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 278:

[13] Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. 2, Երևան, 1984, էջ 108:

[14] Հակոբ Մանանդյան, նշվ. աշխ., էջ 234:

Վաղեսը 378թ. օգոստոսի 9 – ին Ադրիանուպոլիս քաղաքի մոտ սպանվում է: Դրանից հերտո կասրությունն ապրում է ճգնաժամային վիճակ, որը շարունակվում է միչև 382թ.: Թեոդոսիոս կայսրը չի կարողանում միջամտել Մերձավոր Արևելքի գործերին, իսկ Վարազդատը մնում է Պարսկաստանի հետ մեն – մենակ, որը տիրում է Հայաստանի մեծագույն մասին:

Փաստորեն, եթե Մուշեղը կենդանի էլ մնար, չէր կարող իրականացնել իր ծրագիրը Հռոմի հետ կապված, որը Հայաստանը փաստորեն զիջել էր Պարսկաստանին:

Այս կացությունն էր ստեղծվել, երբ Պարսկաստանից Հայաստան վերադարձավ Մանվել Մամիկոնյանը: Չի սխալվում Հ. Մանանդյանը, երբ գտնում է, որ նա Հայաստան է եկել Շապուհի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ[15]: Մինչև այդ, Մուշեղի սպանությունից հետո սպարապետ էր նշանակվել Բատ Սահառունին, իսկ Մամիկոնյանների նահապետ՝ Վաչե Մամիկոնյանը: Վերջինս անմիջապես նահապետությունը հանձնում է Մանվելին, որն առանց նույնիսկ Վարազդատին հարցնելու, իր ձեռքն է վերցնում սպարապետությունը, «հայտնելով ամենքին թե ինչ որ իրեն պատկանում է տոհմային ժառանգական իրավունքով, ոչ ոք չէ կարող խլել իրենից»[16]:

Ակնհայտ էր, որ Մանվելն ուներ ավելի լայն նպատակներ և իբրև թե շատ չանցած Վարազդատին գահընկեց անելով նա լուծել է Մուշեղի վրեժը հարցի սոսկ երևութական կողմն էր: Իրականում նա իրականացնում էր պարսկական ծրագիր, որի համաձայն Հայաստանը պետք է դառնար վասալ պետություն և որի փաստացի ղեկավարն ինքն էր լինելու: Լեոն, անդրադառնալով Կարնո դաշտում 478թ. Մանվելի և Վարազդատի մղած ճակատամարտին, ուր Վարազդատը պարտվում է, բայց միայն ծեծի է ենթարկվում, և դրա վերաբերյալ Փավստոսի հեքիաթապատում զրույցներին, ճշտորեն հետևյալն է գրում տողատակում. «Այս մի ապացույց է, որ Մանվելին Վարազդատի դեմ հանողը սոսկ Մուշեղի արյան վրեժը չէր: Հայերի մեջ էլ գոյություն ուներ արյան վրիժառությունը, և Մանվելի պես մի հսկա անշուշտ չէր խնայի Վարազդատին, եթե սպանության վրեժ էր միայն որոնում»[17]:

Փավստոսի մոտ Մանվելի՝ Վարազդատին ասված խոսքերի մեջ հետևյալն ենք հանդիպում. «…դու Արշակունի էլ չես, այլ պոռնկորդի ես, այդ պատճառով էլ Արշակունիների աշխատավորներին (այսինքն՝

[15] Նույն տեղում, էջ 235:
[16] Լեո, նշվ. աշխ. էջ 491:
[17] Նույն տեղում:

Մամիկոնյաններին – Ա. Ն.) չճանաչեցիր: …բայց դու որովհետև Արշակունի չես, հեռացի՛ր այս աշխարհից և իմ ձեռքից մի՛ մեռնիր»[18]: Ստացվում է, որ չհեռանալու դեպքում պետք է սպանվեր: Այդ դեպքում ինչու՞ չի սպանում, մանավանդ եթե Արշակունի չէր: Կարելի է ենթադրել, որ Մուշեղի Պապի նկատմամբ իրականացված դավադիր սպանությանը մեղսակից լինելու համոզմունքի առկայության պայմաններում նա չի գնացել այդ քայլին և բավարարվել է Բատի և նրա որդիների դաժան սպանությանբ: Եվ վերջապես Մանվելի հետևյալ խոսքերը ոչ մի կասկած չեն հարուցում, որ նա դրել է իշխանության խնդիր, որը և կարողացել է իրականացնել. «Մենք մինչև անգամ ձեր ծառաները չենք, այլ ձեր ընկերներն ենք և ձեզանից ավելի բարձր…»[19]:

Հայոց պետականության շահը պահանջում էր, որ Հռոմի քաղաքական տեղատվության դեպքում նա միանար հայոց արքունի բանակին և կռվեր Շապուհի դեմ և իր եղբոր վրեժը ստորադասեր այդ պետականությանը: Ահա այս դեպքում, կարծում ենք, հնարավոր կլիներ պարսիկների պարտությունը, որով ավելի կբարձացվեր Մամիկոնյանների հեղինակությունը: Բացի այդ, եթե Մուշեղը, թեկուզ և նրա եղբայրը լինելով, դավաճան էր, առաջին դատապարտողներից մեկն ինքը պետք է լիներ: Բայց նա Հռոմի այլ քաղաքական և ռազմական զբաղվածության պատճառով խուսանավելու քաղաքականությունից զրկված Վարազդատին գահընկեց անելով՝ իրականացրեց պետությունը թուլացնող մի ծրագիր՝ Պապի որդիներին ձևական թագավորներ կարգելով, իսկ ինքը դառնալով պետության փաստացի ղեկավարը, որը նշանակում էր պետության անկախության լիարժեք կորուստ և որը ոչնչով չէր արդարացվում: Կարնո Ճակատամարտով և Վարազդատի փախուստով Հռոմ արդեն ակնհայտ էր դառնում, որ Արշակունիների պետությունը անկախ պետականության ամրապնդման պայքարում, որն սկսվել էր դեռևս Խոսրով Կոդակի ժամանակներից, զիջում էր իր դիրքերը: Վարազդատն այս առումով վերջինն էր, որի ծրագրերը նույնպես ձախողվեցին և որը որպես ողբերգական կերպար գնաց համալրելու իր նախորդներ Տիրանի, Արշակի և Պապի շարքերը: Սա է պատմական անողոք ճշմարտությունը:

[18] Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, էջ 279:

[19] Նույն տեղում:

Ա. Ներսիսյան

Վարազդատ Արշակունին և հայոց պետականության ամրապնդման վերջին փորձը

Ամփոփում

Պապ թագավորի սպանությունը կազմակերպելուց հետո Հռոմի Վաղես կայսրը Մեծ Հայքի թագավոր է նշանակում Վարազդատ Արշակունուն: Վերջինս գալով Հայաստան ոչ թե դառնում է Հռոմի վասալը, այլ շարունակում է անկախ պետականության ամրապնդման Պապի քաղաքականությունը, որին ամեն կերպ դիմադրում է Մուշեղ Մամիկոնյանը: Վարազդատի կողմից վերջինիս սպանությունը չի փրկում կացությունը: Հռոմի իրավիճակը բարդանում է, որն ստիպում է Շապուհին իր ազդեցության տակ գցել Մեծ Հայքը: Մանվել Մամիկոնյանը պայքարի է դուրս գալիս Վարազդատի դեմ, հաղթում է նրան և դառնում Հայաստանի փաստացի ղեկավարը՝ ընդունելով Պարսկաստանի գերիշխանությունը: Փաստորեն Մեծ Հայքի թագավորության ամրապնդման Վարազդատի ջանքերը սպասված արդյունքը չեն տալիս:

A.Nersisyan

Varazdat Arshakuni and the last effort of strengthening the Armenian statehood

Sumarry

After the assassination of King Pap, the Roman emperor Vaghes appointed Varazdat Arshakuni as the king of Great Armenia. The latest didn't become the vassal of Rome but continued king Papa's political affairs of the strengthening independent Armenian kingdom which was resisted in every way by Mushegh Mamikonian. The assassination of Mushegh Mamikonian didn't save the situation. The situation in Rome was getting worse and worse, forcing Shapuh to get influence in Great Armenia. After that, Manvel Mamikonian fighted against Varazdat, defeated him and became actual Leader in Armenia, acknowledging Persian dominance. In fact, Varazdat's efforts to strengthen the kingdom of Great Armenia did not produce the expected results.

А. Нерсисяа

Вараздат Аршакуни и последние усилия укрепления Армянского государства

Резюме

После убийства короля Папа римский император Вагес назначил Вараздата Аршакуни королем Великой Армении. Последний не стал вассалом Рима, а продолжил политические дела царя Папы по укреплению независимого армянского королевства, которому Мушег Мамиконян всячески сопротивлялся. Убийство Мушега Мамиконяна не спасло ситуацию. Ситуация в Риме становилась все хуже и хуже, заставляя Шапуха получить влияние в Великой Армении. После этого Манвел Мамиконян боролся против Вараздата, победил его и стал фактическим лидером в Армении, признав персидское господство. Фактически, усилия Вараздата по укреплению королевства Великой Армении не дали ожидаемых результатов.

Խմբագրություն է ուղարկվել 01.07.19
Հանձնարարվել է գրախոսության 08.07..19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19